

ԱՊՕՐԻՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ «ՓԱՍՏԱԹՂԹԱՎՈՐՈՒՄՆ»


ԱՌԵՎՏՐԻ ԹԵՐՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՄԲ

Հիմնաբառեր. առևտրի թերհայտարարագրում, ներմուծման թերարժևորում, արտահանման գերարժևորում, ապօրինի ֆինանսական հոսքեր, ներհոսք, արտահոսք, փողերի լվացում

Առևտրի թերհայտարարագրումը փողերի լվացման տարածված կառուցակարգերից է: Ըստ առկա գնահատականների՝ զարգացող երկրների արտաքին առևտրի մեկ քառորդը ծառայում է որպես ապօրինի ֆինանսական հոսքերի քողարկման և փաստաթղթավորման միջոց: Ընդ որում, ֆինանսական միջոցների ապօրինի արտահոսքն իրականացվում է արտահանման թերարժևորմամբ և ներմուծման գերարժևորմամբ, իսկ ներհոսքը՝ համապատասխանաբար՝ արտահանման գերարժևորմամբ և ներմուծման թերարժևորմամբ: Հայաստանի Հանրապետությունում թերհայտարարագրված առևտրի կշիռը զգալիորեն գերազանցում է (արտաքին առևտրի ընդհանուր ծավալի 1/3-ը կամ 33.8%-ը) զարգացող երկրների միջինացված ցուցանիշը (արտաքին առևտրի 1/4-ը կամ 25%-ը):

Ապօրինի ֆինանսական հոսքերը մեկնաբանվում են որպես «անօրինական ճանապարհով վաստակած, օգտագործված կամ տեղափոխված փողեր, որոնք հատում են տվյալ երկրի սահմանը»¹: Երևույթը նմանատիպ սահմանումներով են բնորոշում նաև Համաշխարհային բանկը, Արժույթի միջազգային հիմնադրամը, Միավորված ազգերի կազմակերպությունը և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը: Մինչդեռ, արտաքին առևտրի թերհայտարարագրման ներքո ընկալվում է ներմուծման և արտահանման մաքսային փաստաթղթերում (հաշիվապարանքագիր, մաքսային հայտարարագիր, ծագման

¹ Global Financial Integrity, Illicit Financial Flows to and from 148 Developing Countries: 2006-2015, Washington, D.C., January, 2019, p. vii.



Աննա
ՓԱԽԼՅԱՆ

Տնտեսագիտության
թեկնածու, դոցենտ

2006 թ. ավարտել է ԵՊՏԻ-ն (այժմ՝ ՀՊՏՀ)՝ «Համաշխարհային տնտեսագիտություն» մասնագիտությամբ, իսկ 2010 թ.՝ ՀՊՏՀ ասպիրանտուրան՝ «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ՝ պաշտպանելով թեկնածուական ատենախոսություն և ստանալով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի ասիստենտ է, «Ամբերդ» հեռուստորակայան կենտրոնի հրավիրյալ փորձագետ: Հեղինակ է 40 գիտական աշխատանքների:

երկրի հավաստագիր, որակի հավաստման կամ այլ բնույթի հավաստագրեր) գործարքի առարկա հանդիսացող ապրանքների քանակի, գնի կամ որակի վերաբերյալ կեղծ կամ ոչ լիարժեք տեղեկատվության ներկայացումը, որը կարող է հանգեցնել առևտրային գործարքի իրական գնին չհամապատասխանող գումարների ներհոսքի կամ արտահոսքի: Այլ կերպ ասած, առևտրի թերհայտարարագրում տեղի է ունենում ապրանքների գինքանակ-որակ փաստացի հարաբերակցության յուրաքանչյուր խախտման դեպքում: Ընդ որում, արտահանման-ներմուծման փաստաթղթերում ապրանքների փաստացի արժեքը գերազանցող գումարների առկայության պարագայում գործարքը համարվում է գերարժևորված, իսկ իրական արժեքից ցածրի դեպքում՝ թերարժևորված: Ամեն դեպքում, նման գործողությունները համարվում են հանցավոր բնույթի՝ նպատակ հետապնդելով կրճատել մաքսազերծման ժամանակ հարկվող գումարի չափը կամ ապրանքների առք ու վաճառքի գործարքով «քողարկել» փողերի վաճառումը:

Փողերի վլացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ միջազգային պայքարի «Ֆինանսական միջոցառումների աշխատանքային խումբը» (ՖԱԹՖ) (Financial action task force on money laundering-FATF) առանձնացնում է փողերի վլացման 3 հիմնական մեթոդներ՝ ըստ որոնց հանցավոր կազմակերպությունները և ահաբեկչության ֆինանսավորողները «տեղափոխում են» «կեղտոտ» փողեր՝ դրանց հանցավոր ծագման հետքերը կորցնելու և օրինական շրջանառության մեջ ներարկելու նպատակով: Այդ մեթոդներից մեկն էլ ապրանքների և ծառայությունների առևտրի կեղծ փաստաթղթավորումն ու հայտարարագրումն է²:

Համաձայն Global financial Integrity-ի

գնահատականների՝ 2006-2015 թթ.³ զարգացող երկրների առևտրի ընդհանուր ծավալների շուրջ 25%-ն իրականում ծառայել է ապօրինի ֆինանսական հոսքերի «փաստաթղթավորմանը», ընդ որում, միայն 2015 թ. առևտրի թերհայտարարագրման ծավալը հասնում է 1,690 մլրդ ԱՄՆ դոլարի⁴: Բնականաբար, ցուցանիշներն էապես տարբերվում են ըստ տարածաշրջանների և առանձին երկրների: Այսպես, օրինակ, Պանամայում առևտրի թերհայտարարագրումը նույնիսկ գերազանցում է առևտրի փաստացի ծավալները, որտեղ ներմուծման թերարժևորմամբ ֆինանսական միջոցների ապօրինի ներհոսքը համարաժեք է եղել 2015 թ. ներմուծման ընդհանուր արժեքային ցուցանիշի 118,2%-ին⁵:

Առևտրի թերհայտարարագրումը հնարավոր է դառնում գործընկերների կողմից առևտրային փաստաթղթերի տվյալները սեփական շահերին հարմարեցնելու կամ տիպիկ օՖշորի (հարկային հանգրվանի) դերում հանդես եկող երրորդ երկրի առևտրային միջնորդության ճանապարհով: Այս կառուցակարգն առավել տարածված է ռեինվոյսինգ (re-invoicing) անվանմամբ, երբ գործարքի միջնորդ հանդիսացող երկրում փաստաթղթերը վերաձևակերպվում են պլանավորված ապօրինի ֆինանսական հոսքերի («վլացման» ենթակա փողերի) չափով գների համապատասխան փոփոխմամբ: Արտահանման, ներմուծման հաշիվապարանքագրերում ապրանքի կամ ծառայության գնի, քանակի կամ որակի կեղծումը հանցագործներին, պետական կոռումպացված պաշտոնյաներին և պարզապես հարկերից խուսափել ցանկացողներին թույլ է տալիս արագորեն, հեշտությամբ և գրեթե միշտ՝ առանց բացահայտվելու ռիսկի հսկայական գումարներ տեղափոխել երկրի սահմաններից դուրս:

Չարագող երկրներից ապօրինի ֆինանսական հոսքերի (ԱՖՀ) զգալի մասը

² Financial Action Task Force (FATF), “Trade Based Money Laundering”, Paris, 23 June 2006, p. 1.

³ Ապօրինի ֆինանսական հոսքերի ամենաթարմ տվյալները հրապարակվել են 2019 թ. և ընդգրկում են մինչև 2015 թվականը:

⁴ Global Financial Integrity, “Illicit Financial Flows to and from 148 Developing Countries: 2006-2015”, Washington, D.C., January 2019, p. 1-2.

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 31:

կապված է արտաքին առևտրի հետ, որի միջոցով էլ հիմնավորվում, իսկ ավելի ճիշտ՝ «փաստաթղթավորվում» են ապօրինի ֆինանսական հոսքերը կամ «կապիտալի փախուստը»: Ապօրինի ֆինանսական հոսքերը հաճախ ընկալվում են որպես «անիժված փողեր», քանզի՝ ա) դրանց ծագումը գրեթե միշտ անհայտ է, բ) դրանց ներհոսքն անտեսանելի է կառավարությունների համար, և հետևաբար՝ գ) դրանք չեն հարկվում, և որ ամենակարևորն է՝ դ) դրանցով հաճախ ֆինանսավորվում է ապօրինի գործունեությունը, ինչպիսին օրինակ՝ թմրամիջոցների տարածումն է:

Կառուցակարգը հետևյալն է.

- Ներմուծման ժամանակ ապրանքներն ուղեկցող փաստաթղթերում միտումնավոր կերպով նշվում է ձեռք բերվող ապրանքների իրական արժեքից որոշակիորեն ցածր գին, այսինքն՝ իրականացվում է ներմուծման թերարժևորում (Import under-invoicing): Ընդ որում, ներմուծման թերարժևորումը կարող է լինել իրական կամ զուտ փաստաթղթային: Վերջինս պարունակում է առավել «մեղմ» հանցավորության տարրեր, քանի որ միտված է ներմուծման հարկերի տեսքով գանձվող գումարի նվազեցմանը: Մինչդեռ, ներմուծման իրական թերարժևորումն անպայմանորեն կապված է փողերի լվացման հետ, քանի որ այս կերպ թերարժևորված ապրանքների տեսքով և չափով տեղի է ունենում ֆինանսական միջոցների ապօրինի ներհոսք դեպի ներմուծող երկիր:
- Ներմուծման գերարժևորում (Import over-invoicing) տեղի է ունենում, երբ ներմուծվող ապրանքներն ուղեկցող փաստաթղթերում միտումնավոր կերպով նշվում է ձեռք բերվող ապրանքների իրական արժեքը որոշակիորեն գերազանցող գին: Այս դեպքում գործ ունենք գերարժևորված ապրանքների դիմաց վճարման տեսքով երկրից ֆինանսա-

կան միջոցների ապօրինի արտահոսքի հետ:

- Ապրանքների տեսքով ֆինանսական միջոցների ապօրինի արտահոսք է գրանցվում նաև արտահանման թերարժևորմամբ (Export under-invoicing), ինչը ենթադրում է ցածրարժեք ապրանքների դիմաց առավել բարձրարժեք ապրանքների արտահանում:
- Արտահանման գերարժևորումը (Export over-invoicing) մատնանշում է ոչ համարժեք արտահանման «քողի» տակ ֆինանսական միջոցների ապօրինի ներհոսք:

Այսպիսով՝ առևտրային գործարքների շրջանակում ֆինանսական միջոցների արտահոսքն իրականացվում է ներմուծման գերարժևորմամբ և արտահանման թերարժևորմամբ: Մինչդեռ, ֆինանսական միջոցների ներհոսքը, ընդհակառակը, ուղեկցվում է ներմուծման թերարժևորմամբ և արտահանման գերարժևորմամբ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ԱՖՀ-երը զգալի կշիռ և կայուն բնույթ ունեն առաջատար երկրների հետ զարգացող երկրների առևտրում: Առևտրի թերհայտարարագրումը հանդես է գալիս որպես զարգացող աշխարհի կայուն և հավասարաչափ աճի խոչընդոտ:

Ապօրինի ֆինանսական հոսքերի հաշվարկներն իրականացվում են Արժույթի միջազգային հիմնադրամի առևտրի աշխարհագրական ուղղվածության⁶ և վճարային հաշվեկշռի ամփոփ ցուցանիշների, ինչպես նաև ՄԱԿ-ի ապրանքային առևտրի տվյալների շտեմարանի⁷ հիման վրա: Առևտրի հետ կապված՝ ապօրինի ֆինանսական հոսքերի հավանական արժեքը որոշվում է որպես թերհայտարարագրված առևտրի ենթադրյալ ծավալների և վճարային հաշվեկշռում չգրանցված հոսքերի (առևտրի մասով անհաշվեկշռվածությունների) հանրագումար:

Ըստ Global Financial Integrity-ի գնա-

⁶ Direction of Trade Statistics (DOTS) and Balance of Payments (BOP) databases, IMF DATA.

⁷ United Nations Comtrade database.

⁸ Global Financial Integrity, “Illicit Financial Flows to and from 148 Developing Countries: 2006-2015”, Washington, D.C., January 2019, p. viii.



ԱՂՅՈՒՍԱԿ 1

Թերհայտարարագրված առևտրի կշիռը զարգացող երկրներում

(զարգացած երկրների հետ առևտրի ընդհանուր ծավալի նկատմամբ՝ արտահայտված %-ներով)⁹

Ցուցանիշներ	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2006-2015 թթ. միջինը
Թերհայտարարագրված առևտրի կշիռը	26.3	25.6	24.8	25.2	24.6	24.4	24.1	25.2	24.6	24.9	24.9
Արտահոսք	12.9	12.3	11.6	11.7	10.8	10.2	9.7	9.5	9.2	8.8	10.5
Ներմուծման գերաբաժնորում	3.2	3.3	3.3	3.4	3.2	3.4	3.3	3.7	3.7	3.6	3.4
Արտահանման թերաբաժնորում	9.7	9.0	8.4	8.3	7.6	6.8	6.4	5.8	5.5	5.3	7.1
Ներհոսք	13.4	13.3	13.2	13.5	13.8	14.2	14.4	15.7	15.4	16.1	14.4
Ներմուծման թերաբաժնորում	9.3	9.0	8.1	9.1	9.4	9.2	8.7	9.1	9.2	10.8	9.2
Արտահանման գերաբաժնորում	4.1	4.3	4.3	4.4	4.5	5.0	5.8	6.6	6.2	5.3	5.2

հատականների՝ առևտրի թերհայտարարագրումը զարգացող երկրներում կայուն բնույթ է կրում՝ տատանվելով 24.1–26.3%-ի միջակայքում⁸ (աղյուսակ 1): Ընդ որում, ֆինանսական միջոցների ապօրինի ներհոսքը (միջինացված ցուցանիշը 2006-2015 թթ. համար համարժեք է զարգացող երկրների առևտրի 14.4%-ին) մշտապես գերազանցում է դրանց արտահոսքը (միջինում համարժեք է զարգացող երկրների առևտրի 10.5%-ին): Ֆինանսական միջոցների ապօրինի ներհոսքի 64%-ն ապահովվում է ներմուծման թերաբաժնորում (զարգացող երկրների 2006-2015 թթ.

առևտրի 9.2%-ը), իսկ 36%-ը՝ արտահանման գերաբաժնորում (առևտրի 5.2%) միջոցով: Իսկ ֆինանսական միջոցների ապօրինի արտահոսքին 68%-ով մասնակցում են արտահանման թերաբաժնորում և 32%-ով՝ ներմուծման գերաբաժնորում «հնարքները»:

Աղյուսակ 2-ում ներկայացված է առևտրի թերհայտարարագրման մակարդակը ՀՀ-ում: Ի հակադրություն ընդհանուր միտումների՝ ՀՀ-ից ֆինանսական միջոցների ապօրինի արտահոսքը (22.5% կամ 304 մլն ԱՄՆ դոլար) գրեթե կրկնակի գերազանցում է դրա ներհոսքը (11.3%



ԱՂՅՈՒՍԱԿ 2

Թերհայտարարագրված առևտուրը ՀՀ-ում

(զարգացած երկրների հետ առևտրի նկատմամբ՝ %-ներով)¹⁰

Հայաստանի Հանրապետություն		
Ներմուծման թերհայտարարագրման ներուժը	Գերաբաժնորում (1)	18.9 %
	Թերաբաժնորում (2)	5.4 %
Արտահանման թերհայտարարագրման ներուժը	Գերաբաժնորում (3)	5.9 %
	Թերաբաժնորում (4)	3.6 %
Ներհոսք (%)		11.3 %
Ներհոսք (մլն ԱՄՆ դոլար)		153
Արտահոսք (%)		22.5 %
Արտահոսք (մլն ԱՄՆ դոլար)		304
Թերաբաժնորված առևտրի ընդհանուր ծավալը	(մլն ԱՄՆ դոլար)	457
	(1) + (2) + (3) + (4) (%)	33.8%

⁹ Global Financial Integrity, “Illicit Financial Flows to and from 148 Developing Countries: 2006-2015”, Washington, D.C., January 2019, p. 2.

¹⁰ Illicit Financial Flows to and from 148 Developing Countries: 2006-2015, 2019, p. 29.

կամ 153 մլն ԱՄՆ դոլար): Հատկանշական է, որ Հայաստանում թերհայտարարագրված առևտրի կշիռը հասնում է երկրի արտաքին առևտրի 1/3-ին (33.8%), այն դեպքում, երբ զարգացող երկրների միջինացված ցուցանիշը չի գերազանցում 1/4-ը (25%):

Նմանատիպ դեպքերը և հատկապես դրանց տարածվածությունը դրդում են մաքսային մարմիններին համարժեք քայլերի, որոնք արտահայտվում են ապրանքների հայտարարագրման ժամանակ առավել բարձր մաքսային վճարումներ առաջացնող մաքսային արժեքի որոշման մեթոդների ընտրությամբ, փաստաթղթերի և դրանցում նշված գների արժանահավատությունը ստուգելու համար, այսպես կոչված, «հսկիչ գների» կիրառմամբ և այլն: Ընդ որում, ՀՀ մաքսային մարմինների կողմից մաքսային արժեքի որոշման մեթոդի ընտրությունն ուղղակիորեն պայմանավորված է առևտրային գործընկեր երկրի հուսալիությամբ և հեղինակությամբ: Այսպես, օրինակ, Չինաստանից, Միացյալ Արաբական Էմիրություններից կամ Իրանի Իսլամական Հանրապետությունից ՀՀ ներկրման դեպքում ապրանքն ուղեկցող փաստաթղթերը մաքսային մարմինները ենթարկում են մանրակրկիտ զննման, նույնիսկ պահանջելով ներմուծման հաշիվ-ապրանքագրերում նշված գների իսկությունը հավաստող պայմանագրեր, բանկային փոխանցման անդորրագրեր և այլ հիմքեր, որոնց լիարժեք և չափազանց համոզիչ լինելու դեպքում միայն գործարքի գինը կարող է հիմք ընդունվել մաքսա-

յին արժեքի որոշման ժամանակ: Եվ եթե Չինաստանը, ՄԱԷ-ը և ԻԻՀ-ը առևտրի թերհայտարարագրման առումով համարվում են կասկածելի երկրներ, ապա Թուրքիայից ապրանքների ներկրման դեպքում գրեթե բացառվում է գործարքի գնի մեթոդի կիրառումը: Որպես հուսալի և առևտրի թերհայտարարագրման սխեմաներում ներգրավվածության կասկածներ չհարուցող՝ կարելի է առանձնացնել Եվրամիության անդամ երկրները (բացառությամբ Իտալիայի և Իսպանիայի), որոնց հետ առևտրում գերազանցապես կիրառվում է մաքսային արժեքի որոշման առաջին՝ գործարքի գնի մեթոդը: Այսպես, օրինակ, 2017 թ. ԵՄ երկրներից ներկրումների 70.36%-ի դեպքում կիրառվել է մաքսային արժեքի որոշման՝ «ըստ գործարքի արժեքի մեթոդը» (1-ին մեթոդ), մինչդեռ ոչ ԵՄ անդամ երկրներից ներկրվող ապրանքների հայտարարագրման ժամանակ 1-ին մեթոդը կիրառվել է 64.1%-ի դեպքում¹¹:

Ենթադրաբար, 2018 թվականի իշխանափոխության և երկրում կոռուպցիոն դրսևորումներն արմատախիլ անելու քաղաքականության շրջանակներում պետք է նվազի նաև ապօրինի ֆինանսական հոսքերի կշիռը ՀՀ արտաքին առևտրային գործարքներում: Սակայն, 2018-2019 թթ. համապատասխան վիճակագրական ցուցանիշները հասանելի կլինեն միայն 2022-2023 թթ., որից հետո միայն հնարավոր կլինի հիմնավորված գնահատական տալ ապօրինի ֆինանսական հոսքերի կրճատման ուղղությամբ «թավշյա» Հայաստանի ձեռքբերումներին:

¹¹ Հայաստանի Հանրապետության մաքսային ծառայություն, Մաքսային արժեքի որոշման մեթոդների վիճակագրական տվյալներ - <http://www.petekamutner.am/Content.aspx?itn=csCICustomsValueDetMethods>

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Global Financial Integrity, “Illicit Financial Flows to and from 148 Developing Countries: 2006-2015”, January 2019, 39 p.
2. Financial Action Task Force (FATF), “Trade Based Money Laundering”, Paris, 23 June 2006, 38 p.
3. Հայաստանի Հանրապետության մաքսային ծառայություն, Մաքսային արժեքի որոշման մեթոդների վիճակագրական տվյալներ, <http://www.petekamutner.am/Content.aspx?itn=csCICustomsValueDetMethods>
4. <https://gfintegrity.org/>

Анна ПАХЛЯН*Приглашенный эксперт исследовательского центра "Амберд", АГЭУ,
кандидат экономических наук, доцент*

АРМЕНИЯ И МИР

**"ДОКУМЕНТИРОВАНИЕ" НЕЗАКОННЫХ ФИНАНСОВЫХ ПОТОКОВ ПОСРЕДСТВОМ
НЕДОДЕКЛАРИРОВАНИЯ ТОРГОВЛИ**

Недодекларирование торговли является широко распространенным механизмом отмывания денег. Согласно текущим оценкам, одна четверть внешней торговли развивающихся стран служит средством маскировки и документирования незаконных финансовых потоков. В то же время незаконный отток средств осуществляется за счет недооценки экспорта и переоценки импорта, а приток - через переоценку экспорта и недооценку импорта соответственно. Доля недодекларированной торговли в Республике Армения значительно выше (1/3 или 33,8% от общего объема внешней торговли), чем в развивающихся странах в среднем (1/4 или 25% внешней торговли).

Ключевые слова: *торговое недодекларирование, заниженное фактурирование (недооценка) импорта, чрезмерное фактурирование (переоценка) экспорта, незаконные инансовые потоки, притоки, оттоки, отмывание денег.*

Anna PAKHLYAN*Invited expert of "Amberd" Research Center, ASUE,
PhD in Economics, Associate Professor*

ARMENIA AND WORLD

"DOCUMENTING" OF ILLICIT FINANCIAL FLOWS THROUGH TRADE MISINVOICING

Trade misinvoicing is a widespread money laundering mechanism. According to current estimates, one quarter of developing countries' foreign trade serves as a means of concealing and documenting illicit financial flows. In addition, the illicit outflow of funds is assured through export under-invoicing and import over-invoicing, and inflows through export over-invoicing and import under-invoicing respectively. The share of misinvoiced trade in the Republic of Armenia is significantly higher (1/3 or 33.8% of total foreign trade) than the average of developing countries (1/4 or 25% of foreign trade).

Keywords: *trade misinvoicing, import over-invoicing, export under-invoicing, illicit financial flows, inflows, outflows, money laundering.*